լուրերու շարք մը։ Ժանտամահին նկատմամբ առատօրէն տուած բազմամասն տեղեկութիւնները՝ որ յոյժ հետաքրքրական են՝ արժանի են պատմութեան բաժնին անցնելու։

Գերյարգելոյ տեառն մերոյ եռամեծի աբբայի
Հօր Հոգեւորի մերոյս Միաբանութեան

Կարօտալի յոցիւ և սիրալի տենջանօք, իբրու ներկայ եղեալ երջանիկ Հօրդ՝ զխանդաղուն համբոյր հանդերձ յիսուսաւանդ ողջունիւ մատուցանեմ. և ընդ ողջունիս զգործոց իմոց և զդիպուածոց համառօտակի ծանուցանեմ։ Եւ զի յետ կելոյս իբրև զչորս ամիս Տրապիզոն մեծաւ մխիթարանօք պատմելոյ զբան տեառն, լիալիր սիրով ուղարկե[ց]այ յեղբարց ի Կումուշխանայ։ Եւ զայլ ինչ գիտելիս Տրապիզոնու նախ քան զայս գիրս գրեցի, զոր յուսամ ժամանեալ գոլ առ տէրդ։ Եւ ի Կումուշխանայ սակաւ գոլոյ վասն ուղղափառաց՝ ոչ յամեցի անդէն աւելի քան զամիս մի, զի մի դատարկասցի բան քարոզութեան, և ի նմին եղեալ զիրակութիւնն գրեցի նախ քան զայս. ուստի շուտով ուղարկեցայ ի նոցունց ի Կարնի։ Ի նմին գտեալ զցանկալին իմ Վերապատուելի Հայր Յակոբն՝ ոչ սակաւ լիացաք մխիթարանօք իրերաց . . . ։ . . . Եւ ի Կարնոյ յունվարի ելի ի ճանապարհ, և հասի ի Ժ աւուրն՝ ի գիւղ մի մերձ Ախսխոյ. և անդէն մինչ զտեղի առեալ էի յաւուրս երիս՝ ահա եկին իշխանք քաղաքին տէր Յով(հ)աննէսիւն, և մեծաւ ընդունելութեամբ ածին ի քաղաքն։ Եւ ի նմին յետ ի գործ ածելոյս զանպիտնն չորս ամսեայ ժամանակաւ՝ յարեաւ կորտորիչ ժանտամահ մի հանգոյն Մարսիլիոյ ժանտամահին. մինչ զի հազիւ գտանիւր մարդ կենդանի՝ որ թաղիցէր զմեռեալն. ուստի ձայն ետու ժողովրդ(ե)ան մի փորձել զտէր ասելով. Որոյ վախճանն հասեալ է՝ մեռանի, և որոյ ոչ՝ ապրի։ Ապա որք լուանն ինձ՝ ելին ինև հանդերձ ի լերինս, թողեալ զկահ և զկարասին ի քաղաքն. և որք ոչ ելին ընդ մեզ ի լեառն՝ կամ յաղագս աղքատութեան և կամ յաղագս անհոգութեան՝ կոտորեաց զնոսա մահն անխնայ. և որք ի լերինս էին՝ զոհանային զԱստուծոյ և օրհնէին զծառայդ և ասէին. Եղեր առիթ հոգևոր և մարմնաւոր կենաց մերոց, յորժամ լսէին զանհամար մահացեալս գիւղից և քաղաքաց։ Եւ թէ որպէս ապրէաք ի լերինս՝ ոչ պատմեցից, զի մի առաւել ցաւեսջիք։ Եւ այս ահարկու մահն սկսաւ ի Շօշ քաղաքէ պարսից և տարածեցաւ ի բոլոր Պարսկաստան. և անտի եհաս ի Վրաստան. և մինչ կարծէի թէ ի տաճիկս չիցէ եղեալ՝ ահա եհաս գիր մի ի Կարնոյ ի լեառն ուր էաք, գրեցեալ ի հօրէ մերմէ, նորում յետ ծանուցանելոյ զիրս հարկաւորս՝ մաղթէ զաղօթս ի մէնջ, աղագս սաստիկ ժանտամահին որ ընթանայ ի քաղաքն և ի գաւառս շուրջ զիւրև։ Եւ ոչ գիտէր հայրն մեր թէ և մեք ի լերինս ցրուեալ եմք յայնր աղագաւ։ Եւ մինչ ի լեառն էաք՝ ահա երևեցաւ ոմն մեծամորուս ի լեռնակողմէն, առ որ առաքեցաք ոմն իմանալ թէ ով իցէ. առ որ հարցեալ է այրն, թէ աՀստ իցէ քարոզիչն Ախսխայու։ Իբրև ասացեալ է այո՛, ասէ ցմերայինն. Երթ և ասա նմա, թէ պատրի մի եկեալ է և խնդրէ զքեզ. և իբրև գնացի և տեսի՝ ահա էր Վենէտիկցի պատրի մի գաբուչին ի բէտէնթօր վանգէ և էր փախուցեալ ի Կօրի քաղաքէ յաղագս ժանտամահին. և իբրև երկնչէաք զի մի գուցցէ մահոտ իցէ, ասէ, մի հոգայք բնաւ, զի բազում օր է յորմէ հետէ ելեալ եմ, և ոչ բնաւ ի չէնս մտեալ իմ. որ և կեցեալ ընդ մեզ աւուրս երկուս՝ եկեալ ի բէտէնթօրն. ուստի զայս գիրս ի լեառն գրեցի, և ետու նմա բերել. և գրիս մեջանն է ի ծխոյ մախրի, գրիչն՝ եղէգն չանթից, իսկ թուղթն տաճկի. և երկընչիմ գուցցէ մինչև եկեսցէ թուղթս՝ մեջանն թափիցի. և լինիցի բանն աննչան . . . ։ . . . Եւ արդ լուարուք և զայլս հիյանալիս, զի յաւուր հսկման մարմնոյ և արեան տեառն՝ եկն եհաս ի քաղաքն Նուիրակ մի Էջմիածնէ, որ էր Դվնեան. և մինչ շրջաբերէաք զսրբազնութիւնն մեծաւ հանդիսիւ՝ ծալեալ ծնկամբ նստեալ ի դասի՝ մոմոայր ինքն ընդ ինքեան և ասէր. Այդ ձեր արածդ՝ խռով եղնի իմ գլխիս. զոր իմանայք թէ զինչ կամի